ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի փետրվարի 12-ից 15-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Հասմիկ Շահինյան, Արսեն Թարզյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ վարույթների իրականացման բաժնի պետ,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության Եվրասիական տնտեսական միության օրենսդրության մեթոդական ապահովման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, ս.թ. փետրվարի 12-ից 15-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Եվրասիական տնտեսական միության իրավունքի պահանջների չպահպանման համար պատասխանատվության ընդհանուր սկզբունքների և մոտեցումների սահմանման հարցերով աշխատանքային խմբին կից փորձագիտական խմբի նիստի անցկացման նպատակը «Մաքսային միության և մաքսային միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտումների համար քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 07.05.2010թ. պայմանագրում նախատեսվող փոփոխությունների քննարկումն էր: Նշված փոփոխություններով նախատեսվում է սահմանել Եվրասիական տնտեսական միության իրավունքի պահանջների չպահպանման համար պատասխանատվության ընդհանուր սկզբունքներ և մոտեցումներ:

6. Քննարկված թեմաները՝

Փորձագիտական խմբի նիստի ընթացքում քննարկվել են «Մաքսային միության և մաքսային միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտումների համար քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 07.05.2010թ. պայմանագրի փոփոխությունները: Մասնավորապես՝ նշված պայմանագրով սահմանված սահմանումների փոփոխությունները, նույն պայմանագրում նոր հոդվածների լրացման անհրաժեշտությունը, որոնցով պետք է սահմանվեն վերոգրյալ սկզբունքները և մոտեցումները, ինչպես նաև նշված պայմանագրի 4-րդ հոդվածի և Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 154-րդ հոդվածով սահմանված դրույթների համապատասխանեցման անհրաժեշտությունը: Քննարկվել են նաև «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու ահնրաժեշտությունը՝ հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության իրավունքի պահանջների չպահպանման համար պատասխանատվության ընդհանուր սկզբունքների և մոտեցումների սահմանման անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ նույն օրենսգրքի 2-րդ հոդվածում «հանցագործություն» և «վարչական իրավախախտում» սահմանումների փոփոխությանն, 154-րդ հոդվածում՝ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի պայմանների խախտումների համար նախատեսված պատասխանատվության կիրառման առանձին հարցերին, իսկ 354-րդ հոդվածում՝ մաքսային մարմինների իրավապաշտպան գործունեությանն առնչվող փոփոխությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տեղի են ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հարթակում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան պաշտոնատար անձանց և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների ներկա-յացուցիչների, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են քննարկվող հարցերի վերաբերյալ համապատասխան առաջարկներ, դիրքորոշումներ, պարզաբանումներ, ՀՀ իրավակիրառ պրակտիկան, ինչի հիման վրա մշակվել են «Մաքսային միության և մաքսային միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտումների համար քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 07.05.2010թ. պայմանագրում փոփոխություններ իրականացնելու մասին նախագծի համապատասխան դրույթները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Փորձագիտական խմբի նիստի արդյունքներով մշակվել են «Մաքսային միության և մաքսային միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտումների համար քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 07.05.2010թ. պայմանագրում փոփոխություններ իրականացնելու մասին նախագծի համապատասխան դրույթները: Չհամաձայնեցված հարցերը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների նախաձեռնությամբ նախատեսվում է քննարկել համապատասխան աշխատանքային խմբի շրջանակներում: Փորձագիտական խմբի նիստի արդյունքներն ամփոփվել են համապատասխան արձանագրությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

«Մաքսային միության և մաքսային միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտումների համար քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 07.05.2010թ. պայմանագրում փոփոխություններ իրականացնելու մասին նախագծի առանձին դրույթները նախատեսվում է քննարկել Եվրասիական տնտեսական միության իրավունքի պահանջների չպահպանման համար պատասխանատվության ընդհանուր սկզբունքների և մոտեցումների սահմանման հարցերով աշխատանքային խմբի շրջանակներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արսեն Թարգյան _____

17.02.2023թ.